ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 15-Ա

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.06.2019Թ. ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մանին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի նոր անդամի թեկնածությունը հաստատելու մասին
2. Բնակելի կառուցապատման հողամասն անհատույց հատկացնելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 16-Ա

ՀԱՄԱՅՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությունը և Խաշթառակ համայնքի միջնակարգ դպրոցի կառավարման խորհուրդ ձևավորելու նպատակով հաստատել համայնքապետարանի ներկայացուցիչ Արթուր Աշոտի Մխիթարյանի թեկնածությունը

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 17-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- հողաշինարար՝ Գեղամ Վիրաբյանը: Նա նշեց, որ դեռևս 1991 թվականին սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակիչ Արծրուն Քամալյանին հատկացվել է տնամերձ հողամաս, սակայն անշարժ գույքի պետական կոմիտեում չի գրանցվել, հաշվի առնելով այն փաստը, որ սեփականաշնորհման ժամանակ նա չափահաս չի եղել: Այս ամբողջ ընթացքում նա փաստացի օգտագործել և տիրապետել է հողամասը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արծրուն Քամալյանը սեփականաշնորհումից չի օգտվել, հաշվի առնելով այն փաստը, որ սահմանամերձ բնակավայրերում սեփականաշնորհումից չօգտված քաղաքացիներին անհատույց տնամերձ է հատկացվում,
Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով և 64-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին, **որոշում է**

1. Խաշթառակ համայնքի վարչական տարածքում գտնվող 11-035-0082-0004 ծածկագրի բնակելի կառուցապատման 0,16143 հա հողամասը ճանաչել համայնքի սեփականություն

2. Խաշթառակ համայնքում հաշվառված և սեփականաշնորհումից չօգտված՝ Արծրուն Ռազմիկի Քամալյանին անհատույց սեփականության իրավունքով հատկացնել 11-035-0082-0004 ծածկագրի 0,16143 հա բնակելի կառուցապատման հողամասը

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ